ԸՆԿԵՐՈՒՀԻ ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ

«ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԸ ԲԱՑ ՈՒ ՊԱՐԱՐՏ ԴԱՇՏ Է»

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ

«Ֆերահեան» ազգ. վարժարանի Երկրորդական երեք դասարաններու Ա. Բաժիններու Հայ Դատի դասատուն է ընկերուհի Ռուբինա Փիրումեան, որ կամաւոր ստանձնած է այդ պարտականութիւնը, իսկ ստանալիք գումարը կը յատկացուի Հայ Դատի Ցանձնախումբին:

Մեր տեսակցութեան ընթացքին, ընկերուհի Փիրումեան մեր տրամադրութեան տակ դրաւ տարեսկիզբին կատարած իր հարցախոյզին արդիւնքները, որոնք հետեւեալ պատկերը կը պարզեն:

Միջին հաշիւով, աշակերտութեան 75 առ հարիւրը հետաքրքրուած չէ Հայ Դատով: 25 առ հարիւրը կ'ըսէ, թէ քաղաքական հետաքրքրութիւն չունի եւ կամ Հայ Դատն է որ չի հետաքրքրեր:

Միջին հաշիւով, 86 առ հարիւրը կը կարծեն, որ եթէ հաւաքական աշխատանք տանիք եւ ջանք թափեն, հայութիւնը սփիւռքի մէջ կը յարատեւէ: Մնացեալ 14 առ հարիւրը կը մտածէ, թէ ինչ որ ալ ընեն, օգուտ չունի. հայութիւնը կը ձուլուի եւ կամ՝ աշխատին թէ չաշխատին, հայութիւնը կը յարատեւէ:

Հայ Դատը լուծելու միջոցառումներուն մասին՝

45 առ հարիւրը կը հաւատայ թէ՛ խաղաղ եւ թէ զինեալ պայքարին:

39 առ հարիւրը միայն խաղաղ պայքարին կողմնակից է:

8 առ հարիւրը՝ միայն զինեալ պայքարին:

8 առ հարիւրը՝ անտարբեր է:

Աշակերտներուն 47 առ հարիւրը կը կարծէ, թէ զինեալ պայքարը կը վտանգէ հայութիւնը եւ ամերիկացին հայերուն ահաբեկիչ կ'անուանէ:

92 առ հարիւրը տան մէջ հայերէն կը խօսի, իսկ ընկերները իրարու հետ հայերէն կը խօսին՝ 53 առ հարիւրով:

Ընկերուհի Փիրումեանի համոզումը այն է, որ եթէ իրապաշտ ըլլանք, տան մէջ հայերէն խօսողներուն տոկոսը արդիւնքէն նուազ է, իսկ իրարու հետ անգլերէն խօսողներունը՝ շատ աւելի բարձր:

Ընկերուհի Ռուբինա Փիրումեան հետեւեալ պատասխանները տուաւ «Ասպարէզ»ի հարցումներուն.—

«ԱՍՊԱՐԷԶ».— Այս տարուան Հայ Դատի դասընթացքներու ձեր ծրագիրը ի՞նչ է:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.— Նկատի ունենալով որ շատ կարճ ժամանակում իմացայ, որ պէտք է պարապեմ աշակերտների հետ, շատ արագ ձեւով մէկ ծրագիր կազմեցի: Անցեալին, նոյն դասին ընդհանրապէս խօսում էին Սան Ստեփանոյի դաշնագրի մասին եւ հասնում էին մինչեւ Լօզանի դաշնագիր եւ սփիւռք: Իմ կազմած ծրագրի նպատակը երեխաների մօտ հետաքրքրութիւն արթնցնել է: Հենց այդ պատճառով, որոշեցի որ պատմականը շատ արագ ձեւով տամ իրենց եւ Հայ Դատը ներկայացնել որպէս այրուող, շնչող մի նիւթ, որովհետեւ, առաջին օրէն ստացայ այն տպաւորութիւնը, որ երեխէքի կարծիքով Հայ Դատ նշանակում էր Սան Ստեփանոյի դաշնագիր, Պերլինի վեհաժողով եւ Խրիմեան Հայրիկի «Երկաթէ Շերեփը» եւ Հայ Դատին նայում էին որպէս հինացած, մեռած, կորած մէկ բան, որ միայն պիտի սովորեն դրանք, որպէսզի մէկ թուանշան ստանան: Պատմականին համար 20–25 հարցեր պատրաստեցի եւ հարցերի վերաբերեալ նիւթեր տուեցի, որոնց աշակերտները պարտաւոր էին մէկ պատասխան ներկայացնել, որու ամբողջացումով կազմուեց մէկ հատ դասագիրք: Միշտ պատմականին մէջ չմնալու համար, աշխատեցի վիճաբանական եւ իրենց հետաքրքրքրող նիւթեր արծարծել: Օրինակի համար, խնդիրներից մէկն էր, որ եթէ հողերը վերադարձուեցին, ո՞վ կ'երթայ կ'ապրի մեր հողերին վրայ: Մէկ ուրիշ նիւթն էր, որ եթէ Թուրքերը պատրաստակամութիւն յայտնեցին բանակցելու, որո՞նք պիտի ըլլան հայ ժողովուրդը ներկայացնողները: Դրանից աւելի, այժմէական նիւթերի մասին ենք խօսում, որոնց մասին զանազան թերթերից յօդուածներ եմ գտնում եւ այդ յօդուածները ամէն անգամ մի քանի հոգի պարտաւոր են աղբիւրները վերցնել, տեղեկագիր պատրաստել եւ կարդալ:

«Ա.».— Շաբաթը քանի՞ պահ տրամադրուած է ձեր նիւթին, եւ արդեօք բաւարա՞ր է:

Ռ. Փ.— Հայ Դատի դասընթացքներին տրամադրուել է մէկ ժամ, որը շատ քիչ է: Ամէն մէկ ժամը ինձ համար իսկապէս պայքար է, որ ես կարողանամ այդ մէկ ժամուայ ընթացքում ինչքան նիւթ տամ եւ այդ ժամը 100 տոկոսով օգտագործեմ: Տանը մէջ աւելի շատ եմ աշխատում, քան ոեւէ մէկ աշակերտ:

«Ա.».— Հայ Դատի հանդէպ աշակերտների կեցուածքը ի՞նչ է:

Ռ. Փ.— Տարուայ սկիզբին մէկ հատ հարցարան էի պատրաստել իրենց համար, որը ունէր 17 հար-

(Շար. 8րդ էջ)

«Հայոց Դպրոցը Պարարտ Դաշտ է»

(Շար. Վեցերորդ էջէն)

ցումներ: Պատասխաններից զգացի, որ ամէն մէկի կեցուածքը ինչ էր Հայ Դատի հանդէպ, ընտանիքից եկած դաստիարակութիւնը ինչ է եւ ընդհանրապէս հետաքրքրուա՞ծ է թէ անտարբեր է: Իմ պայքարս այն է, որ անտարբերները փոխեմ: Կան աշակերտներ, որոնք բոլորովին հետաքրքրուած չեն եւ լուռ են մընում, կան նաեւ ուրիշներ, որոնք հետաքրքրուած չեն եւ աշխատում են խանգարել իրենց կեցուածքով եւ այդ մէկը աւելի դժուար է ինձ համար, որովհետեւ աշխատում եմ շատ պաղարիւն մնալ եւ առանձին խօսեմ իրանց հետ եւ զգամ թէ ինչու են անտարբեր, ինչն է իրանց արգելում, որ հետաքրքրուեն Հայ Դատի խնդիրներով:

«Ա.»·— Կը կարծէ՞ք, որ հայերէն լեզուն գործածելը Հայ Դատը ներկայացնելու համար կենսական է:

Ռ. Փ.— Եթէ դասաւանդութեան տեսակէտից ես ասում, ես այդ դժուարութիւնը ունեցայ: Տարուայ սկիզբին, որպէսզի կարողանամ իրենց հետ աւելի յարաբերել, ազատութիւն տուի որ իրենց գրութիւնները թէ՛ հայերէն գրեն, թէ՛ անգլերէն, թէ՛ արեւելահայերէն, թէ՛ արեւմտահայերէն: Ասիկա առիթ դարձաւ, որ աւելի ազատ զգան: Եւ ես այն տպաւորութիւնը ունեմ, որ կան աշակերտներ, որոնք շատ ուժեղ, գեղեցիկ հայերէն ունեն, բայց նրանք շատ քիչ տոկոս են կազմում: Ցաւօք սրտի պիտի ասեմ, որ անգլերէնով շատ աւելի ազատ են արտայայտւում, չնայած, որ հայոց դպրոց են երթում:

«Ա.»·— Լեզուի գործածութեան առնչութեամբ ձեր անձնական տեսակէտը ի՞նչ է:

Ռ. Փ.— Գուցէ Ամերիկայում չարտայայտուէի եւ Միջին Արեւելքում լինէի, մտածէի, որ հարիւր տոկոս հայերէնը պէտք է եւ եթէ հայերէն չգործածենք, Հայ Դատը լուծուելու չէ: Բայց երբ այստեղ ես, զգում ես շրջապատիդ մէջ խընդիրներ են առաջանում ինչպէս են Հայ Դատի հարցերը լուծւում, կարծես միտքդ չափաւորւում է եւ մտածում ես որ կարելի է նաեւ հայերէնը էդչափ չիմանալ: Բայց անոնք, որ բոլորովին հայերէն չեն խօսում, իմ կարծիքով չեն կարող կապուած մնալ հայկական կեանքին, հայկական հոգուն, հայկական մշակոյթի հետ: Հայերէնը լաւ չիմացողների 80 տոկոսը գիտէ, որ իրենց շրջապատի պատճառով է, որ անգլերէն են խօսում, բայց առնուազն, դրանք որ մէկ տեղ են հասել, որ զգում են, որ շատ լաւ հայ հոգի ունեն եւ Հայ Դատ են պաշտպանում, ժամանակն ունեն հայերէն սովորելու:

«Ա.»·— Հայ Դատի իրենց գիտելիքները գործնական փորձառութիւններով հարստացնելու միջոցները կա՞ն:

Ռ. Փ.— Շատ լաւ գաղափար է. ես շատ մտածեր եմ, որ գործնական մէկ բան լինի, բայց շաբաթը մէկ օրով չեմ կարողանում էդ բանը անել: Օրինակի համար, մէկ քանի ծրագիրներ ունեմ, թիւ 192 Բանաձեւի մասին Գոնկրէսին մէջ տեղի ունեցած ելոյթները ցոյց տուի: Մոռացայ աւելացնելու, որ 10րդի ծրագրին մաս կը կազմէ, իսկ 11րդի եւ 12րդի համար յաւելեալ մի աշխատանք է հարցազրոյց կատարել Հայ Դատի ներկայացուցիչի 'լամ հայոց վարժարանի տեսուչի հետ եւ կամ վերապրողի հետ: Իսկ դուրս տանել իրենց, օրինակ Եու. Սի. էլ. էյ. եւ կամ մեր Հայ Դատի գրասենեակը տանեմ, ժամանակը չունեմ:

«Ա.»·— Անցեալին, կարգ մը ուսուցիչներ արտայայտուած են, ըսելով որ Հայ Դատը կը շփոթեն հայապահպանման հետ, արդեօք նոյն երեւոյթը նշմարա՞ծ էք:

Ռ. Փ.— Ես այդ բանը չեմ զգացել, ընդհակառակը Հայ Դատ ըսելով կարծես զինեալ պայքարն են հասկանում եւ ուզում եմ, որ դա չլինի, իրենց թւում է որ Հայ Դատ նշանակում է զինեալ պայքար եւ խրտչում են դրանից: Իմ նպատակս է ինչքան կարող եմ Հայ Դատի Ցանձնախումբի խաղաղ պայքարի աշխատանքները ցոյց տամ:

«Ա.»·— Պիտի ուսումնասիրէ՞ք վերջին տասնամեակի զինեալ պայքարը:

Ռ. Փ.— Այո, ուսումնասիրելու ենք զինեալ պայքարը սկիզբից մինչեւ վերջ. այսինքն՝ 1915ի ջարդերից յետոյ մեր փոխվրէժը: Դրանք ամէնը ծրագրի մէջ են եւ արդէն աղբիւրները տուել եմ, որ որտեղից կրնան օգտուել:

Յետոյ, խօսել եմ նաեւ ներկայ զինեալ պայքարի զանազան միջոցառումների մասին: Այսինքն զանազան խմբակցութիւնները ի՞նչ թիրախներ ունեն:

«Ա.»·— Բացի լեզուի հարցէն, հիմնական ի՞նչ դժուարութիւններ կը դիմագրաւէք:

Ռ. Փ.— Հիմնական դժուարութիւններէս մէկը որոշ տոկոսի անտարբերութիւնն է եւ ընդհանրապէս հայ աշակերտութեան աշխատանքից փախչելը: Կան աշակերտներ, որոնք շատ սիրով են աշխատում, ուրիշներ աշխատում են թուանշանի համար, աշակերտներ էլ կան որ բոլորովին չեն աշխատում: Իմ դժուարութիւնս է շատ կարճ ժամանակում շատ բան տալը եւ իմ կարծիքով աշակերտները շատ քիչ գիտեն: Գուցէ հայոց դպրոցների ծրագիրը պիտի փոխուի, գուցէ պէտք է մէկ անգամ մենք զմեզ նստենք եւ հաշիւ տանք, որ հայոց դպրոցը մենք ինչի համար ենք ուզում, որն է մեր նախասիրութիւնը, հայ հոգին որքան եւ ինչպէս ենք տալիս, գուցէ այդ ամէնը մէկ անգամ վերարժեւորման պէտք է ենթարկուի, որովհետեւ միջին հաշիւով Հայ Դատի մասին շատ քիչ տեղեկութիւն ունեն: Փաստն է, որ երիտասարդական կազմակերպութիւնների մէջ շատ քիչ են մասնակցում: Ամէն մէկ դասարանից հազիւ 4 կամ 5 հոգի ամէնէն լաւ պարագային Հ. Ե. Դ.ի անդամ են եւ դրանք որոնք Հ. Ե. Դ.ի անդամ են, յատուկ ձեւի հետաքրքրութիւն եմ զգում նրանց մէջ, ատով հանդերձ, Հ.Ե.Դ.ի աշխատանքը քիչ եմ տեսնում դպրոցի մէջ. Հ.Ե.Դ.ի մէջ եղել եմ, գիտեմ դժուարութիւնները, գիտեմ որ էդքան դիւրին չէ, երբ ասում ենք դպրոցների մէջ աշխատանք տանել: Բայց երբ տեսականօրէն խօսում ես, ափսոս է որ մեր հայոց դպրոցները աւելի քիչ քաղաքական աշխատանք կը տանեն: Հայոց դպրոցը բաց ու պարարտ դաշտ է մեզ համար, ուր կարող ենք սերմը ցանել: Դաշտ մըն է, որ ամէն ձեւի պէտք է օգտագործենք:

*
* *

Մեր այս շահեկան զրոյցի աւարտին, ընկերուհի Փիրումեան յոյս յայտնեց, որ Հայ Դատի ուսուցիչներու հետ տեսակցութիւնները խթան կը հանդիսանան, որ Ֆով-Ֆովի գալով, շրջանի հայ ուսանողութեան համար Հայ Դատի դասաւանդութեանց համադրուած միատեսակ ծրագիր որդեգրուի: